

## Սիրելի հայրենակիցներ,

Մայիս 21ին բուլղոբցի հնգամեայ պաշտօնավարութեանս երկրորդ տարին, նպատակ ունենալով շարունակել գործել թափանցիկ ձեւով եւ կարողութեանս սահմաններէն ներս սատարել Կիպրահայ համայնքի ընդհանրական շահերուն:

Վստահութեամբ կրնամ ըսել թէ ձեռքբերուած արդիւնքները եղան արդիւնաւետ, արդարացնելով բարդ ու դժուար հարցերուն լուծումը:

Ատենին ձեզի տեղեակ պահած էի Զին գերեզմանատան վերանորոգութեան համար կառավարութենէն ապահոված նիւթական օժանդակութեան մասին եւ ուրախութեամբ կը փափաքիմ փոխանցել, թէ բարեգարդման աշխատանքները արդէն իսկ սկսած են: Այս մէկը կրնամ համարել երկրորդ տարեշրջանիս մեծագոյն իրագործումը, որ վերջ դրաւ գաղութէն ներս յառաջացած ընդվզումներուն, որ կը միտեր հարուածել Զայ Եկեղեցին ու Ազգային Իշխանութիւնը:

Նոյն ծիրէն ներս, ինչպէս արդէն գիտէք Եկեղեցւոյ Կիպրոսի կառավարութեան յատկացումը, որ վերջին տասը տարիներուն անփոփոխ մնացած էր, բարձր համեմատութեամբ յաւելում կրելով հասաւ շուրջ վաթսուն հազար եւրոյի:

Գալով Կիպրահայ գաղութի կայքէջին, մեծ ոգեւորութիւն ստեղծած է համայնքի երիտասարդութեան մօտ, որոնք անհամբեր կը սպասեն մրցանքի խաղերուն: Իսկ գրասենեակ դիմող Յոյն կամ օտար լրագրողներուն եւ մտաւորականներուն, որոնք Կիպրահայ գաղութի պատմութեան եւ կառոյցներուն մասին տեղեկութիւններ կը փնտռեն, անվարան կը ներկայացնենք մեր արդիական կայքէջին մանրամասնութիւնները: Անոնք գոհունակու-

թեամբ կը հեռանան գրասենեակէն, հաստատելով թէ միակ կազմակերպուած Կրօնական Փոքրամասնութիւնս ենք կողդիէն ներս:

Հոս տեղին է յիշել, թէ աշխատանք կը տարուի Կիպրահայ գաղութին պատմութեան հոլովոյթը սկիզբէն մինչեւ օրս համադրելու, Փոքրամասնութիւններու նուիրուած գիրքի մը որպէս մէկ բաժինը հրատարակելու, հովանաւորութեամբ եւ նիւթական օժանդակութեամբ Կրթական եւ Մշակոյթի Նախարարութեան եւ յոյսով ենք, թէ մինչեւ գալիք տարեշրջան շօշափելի արդիւնք կ'ապահովենք, շնորհիւ անձնագոհ եւ վաստակաւոր ազգայինի մը պատրաստակամութեան:

Հայաստան-Կիպրոս փոխ-յարաբերութեան աշխատանքներու ծիրէն ներս, պատմական իրողութիւն էր Հայաստանի Հանրապետութեան Երեւանի Պետական Համալսարանի ռեկտոր Փրոֆ. Արամ Սիմոնեանի կնքած համաձայնագիրը, գործակցելու Կիպրոսի Պետական Համալսարանին հետ, որու ընթացքին ներկայ գտնուեցայ: Այս համագործակցութեան գծով տարուելիք աշխատանքներուն, մեծ դեր պիտի ունենայ Կիպրահայ Պետական Ներկայացուցիչը եւ յոյսով ենք, թէ ապագային այս համագործակցութիւնը կըրնայ յանգիլ Հայկական ամպիոնի մը ստեղծման:

«Լրատու»ի այս թիւին հետ պիտի ստանաք «Տարեցներու Ձեռատետր» մը, որ սիրայօժար կերպով պատրաստուեցաւ Տարեցներու խորհրդարանի ներկայացուցիչ եւ փոխ-ներկայացուցիչ Տիկիններ Անահիտ Էսքիճեանի եւ Էլսի Իւթիւճեանի կողմէ, թարգմանական աշխատանքին իր մասնակցութիւնը բերաւ Պրն. Արիս Իւթիւճեան: Յատուկ շնորհակալութիւններս կը փոխանցեմ իւրաքանչիւրին, այս օգտաշատ գրքոյկին իրագործման համար: Նաւէ յիշեցնեմ, թէ մինչեւ տարեվերջ ձեռնարկ մը պիտի կազմակերպուի «Իւթիւճեան» սրահին մէջ, մասնագետ անձերու ներկայութեամբ, որու ընթացքին թոշակառուները լուսաբանութիւն

պիտի ստանան զիրենք յուզող հարցերուն եւ իրաւունքներուն շուրջ:

Մեծ յաջողութեամբ իրականացաւ Երիտասարդական Յանձնախումբի կազմակերպած շարք մը ձեռնարկները Մայիս եւ Յունիս ամիսներուն, որոնց մանրամասնութիւնները պիտի տեսնէք «Լրատու»ի թիւ 15 էջին մէջ:

Յատուկ հաղորդագրութեամբ մը գաղութիս անդամները տեղեկացուցած էի Մայիս 28ին Լառնաքայի ծովեզերքը զետեղուած Ապրիլեան յուշակոթողին իրադարձութիւններուն մասին, որ մեծ ընդվզում ստեղծեց Կիպրահայ գաղութի իրականութենէն ներս, սակայն պիտի չուզեմ դարձեալ անդրադառնալ այս եղելութեան մասին, բաւարարուած զգալով թէ Կիպրահայ գաղութը լուսաբանուեցաւ ու տուաւ իր դատողութիւնը:

4 Յունիս 2008ին, Յունաստանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունէն ստացանք երկքաղաքացիութեան օրէնքներն ու պայմանները: Յաւելեալ մանրամասնութեան համար հետաքրքրուողներէն կը խնդրուի դիմել երեսփոխանական գրասենեակ:

Առ ի գիտութիւն նշեմ, թէ Յունիս 22ին Կիպրոս պիտի այցելէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Ժամադրութիւններ ապահոված եմ շարք մը տեսակցութիւններու համար, Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիասին, Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանին եւ Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ պետ Խրիստոստոմոս Բ. Արքեպիսկոպոսին հետ: Վերոյիշեալ այցին եւ հանդիպումներուն մանրամասնութիւնները պիտի ունենաք «Լրատու»ի յաջորդ թիւով:

Բոլորիդ կը մաղթեմ հաճելի եւ անմոռանալի ամառնային արձակուրդ:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Քաղաքացիական հարցերու գծով տարուած աշխատանքները շարունակուեցան կանոնաւոր ձեւով, ապահովելով մեծ թիւով կեցութեան եւ աշխատանքային արտօնագիրներ: Հիմնական լուծում տրուեցաւ մի քանի առկախ մնացած կեցութեան եւ աշխատանքային դիմումներուն, անմիջական միջամտութեամբ Ներքին Գործոց Նախարարին, որոնք 2005 թուականէն չէին նորոգւած զանազան պատճառներով եւ անելի դիմաց կը զըտնուէին: Նիկոսիա բնակութիւն հաստատած անհատի մը աշխատանքային եւ կեցութեան արտօնագիր ապահովուեցաւ 5րդ տարուան համար, շնորհիւ Պրն. Մահտեսեանի միջամտութեան, հակառակ մերժում ստացած ըլլալու իրողութեան:

Հոս կը փափաքինք փոխանցել, թէ Կիպրոսէ ներս օրինաւոր կեցութեան եւ աշխատանքային արտօնագիր ապահովելու պայմանները աւելի խստացան Մայիս ամիսէն սկսեալ եւ նոր պայմաններով կը պահանջուին յաւելեալ փաստաթուղթեր: Դրամատան երաշխաւորագիրը (Bank guarantee) եւ առողջապահական ապահովագրութիւնը (Health Insurance) անհրաժեշտութիւններ են, որ պետք է կցուին դիմումներուն, բացի այն պարագային եթէ օտարական մը ամուսնացած է Կիպրահպատակի հետ: Կիպրոս կեցութեան հասցէն եւ կամ վարձու յարկաբաժինին համաձայնագիրը, ինչպէս նաեւ Կիպրացիի մը երաշխաւորութիւնը անպայման կը պահանջուին, մանաւանդ եթէ Կիպրոս մուտք գործողը, որպէս այցելու պիտի մնայ երկրէն ներս: Այցելուի արտօնագիրը առաւելագոյնը կը տրուի միայն 6 ամսուայ ժամանա-

կամիջոցով, որու աւարտին, այցելուն պետք է վերադառնայ իր երկիրը եւ երկրէն դարձեալ ապահովէ Կիպրոս մուտքի արտօնագիր:

### **Հպատակութիւն**

Ապրիլ ամսուայ մէջ, երկու անհատներ հպատակութիւն ստացան, որոնց ծնողները արդէն իսկ Կիպրահպատակ էին:

### **Առողջապահական**

Կիպրահայ փոքրիկ մը 12 Մայիս 2008ին, որ կը դիմագրաւէր առողջապահական բարդ հարցեր, Պրն. Մահտեսեանի անմիջական միջամտութեամբ եւ դասաւորումով, ուղարկուեցաւ Իսրայէլ բժշկական ախտաճանաչման եւ դարմանումի ենթարկուելու համար:

### **ՀՀ Երեւանի Պետական Համալսարանի Ռեկտորի Այց**

Ապրիլ 13-16 Կիպրոս այցելեց Երեւանի Պետական Համալսարանի Ռեկտոր Փրոֆ. Արամ Սիմոնեան Կիպրոսի Պետական Համալսարանին հրաւերով:

Այցելութեան նպատակն էր համագործակցութեան համաձայնագիր մը կնքել Կիպրոսի Պետական Համալսարանին հետ, քաջալերելու ուսանողներու եւ ակադեմականներու փոխանակման հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ իրագործել միացեալ հետազօտական աշխատանքներ եւ խորհրդաժողովներու եւ սեմինարներու կազմակերպում:

15 Ապրիլ 2008ին տեղի ունեցաւ համաձայնագրի ստորագրումը Ռեկտորներ Փրոֆ. Սթավրոս Չենիոսի եւ Փրոֆ. Արամ Սիմոնեանի կողմէ, 5 տարուայ ժամանակաշրջանով, ներկայութեամբ Կիպրահայ Համայնքի Պե-



Փրոֆ. Սթափրոս Չենիոսին եւ  
Փրոֆ. Արամ Սիմոնեանին հետ

տական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեանի եւ Կիպրոսի Պետական Համալսարանի այլ պատասխանատուներու:

Համագործակցութեան աշխատանքներուն ընթացքին աշխոյժ դերակատարութիւն պիտի ունենայ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը, համադրողի կապը հանդիսանալով երկու համալսարաններուն միջեւ: Ապագային, այս համագործակցութիւնը կրնայ վերածուիլ Հայկական ամպիոնի մը ստեղծման, կարելիութեան պարագային, որ Մարտ 2007ին Պրն. Մահտեսեանի կողմէ արդէն իսկ առաջարկուած էր Կիպրոսի Պետական Համալսարանի Ռեկտորին, անոր հետ ունեցած հանդիպումին ընթացքին:

Օգտուելով Փրոֆ. Սիմոնեանի այցելութենէն, Պրն. Մահտեսեանի դասաւորումով, 14 Ապրիլին ան այցելեց Նիկոսիոյ Ազգային Առաջնորդարան՝ հանդիպելու Գերշ. Տ. Վարուժան Արքեպիսկոպոսին եւ Թեմական Մարմինի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանին հետ: Իսկ 15 եւ 16 Ապրիլին ան այցելեց Կիպրոսի երեք քաղաքներուն

մէջ գտնուող Նարեկ Զայկական Վարժարանները, ներկայ եղաւ հապճեպ պատրաստութեամբ ներկայացուած կոկիկ հանդէսներուն, ուրկէ ան մեկնեցաւ բարձր տպաւորութիւններով:

### Ապրիլ 24

Հինգշաբթի, 17 Ապրիլ 2008-ին, Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչը խորհրդարանի նիստին ընթացքին խօսք առնելով, Կիպրահայ գաղութի երախտագիտութիւնը յայտնեց Կիպրոսի Կառավարութեան, որ առաջին պետութիւնը հանդիսացաւ Եւրոպական երկիրներուն մէջ, որ ոչ միայն ճանչցաւ Զայկական Յեղասպանութիւնը այլ նաեւ քայլ մը առաջ երթալով դատապարտեց Թրքական կառավարութեան գործած աններելի արարքը:

Չորեքշաբթի, 23 Ապրիլ 2008-ին, Պրն. Սահտեսեան, Փաստիկ սրահին մէջ տեղի ունեցած Զայկական Յեղասպանութեան Կիպրոսի



Ոգեկոչման Յանձնախումբին կազմակերպած ձեռնարկին խօսք առնելով, շեշտը դրաւ Հայ ժողովուրդի պահանջատիրութեան գծով մղած պայքարին, իսկ յաջորդօրը Հինգշաբթի, 24 Ապրիլին, հարցազրոյց մը ունեցաւ Կիպրոսի Ռատիօկայանին առաջին ալիքէն:

### **Շնորհաւորական գիր**

3 Յունիս 2008 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը իր շնորհաւորութիւնները յայտնեց Զ.Բ.Ը.Մ. «Արարատ» Ֆութսալ խումբի ատենապետին, մարզիչին եւ մարզիկներուն, Կիպրոսի Ֆութսալի մըրցանքին բաժակին տիրանալուն համար:

Իսկ 26 Յունիս 2008 թուակիր շնորհաւորագիրով մը, Պրն. Մահտեսեան որպէս Հայ եւ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ իր գոհունակութիւնը եւ հպարտանքը փոխանցեց Pharos Trust-ի նախագահ Պրն. Կարօ Թէէյեանի, հիմնարկի 10ամեակի հանդիսութեան առիթով եւ մշակութային բնագաւառէն ներս անոր արձանագրած բարձր նուաճումներուն գծով, մաղթելով հիմնարկութեան նորանոր յաջողութիւններ:

### **Մամլոյ Հաղորդագրութիւն**

28 Մայիս 2008 թուակիր մամլոյ հաղորդագրութեամբ մը, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը իր եւ գաղութին ջերմ երախտագիտութիւնը յայտնեց Կիպրոսի բարեխնամ կառավարութեան տրամադրած նիւթական օժանդակութեան, Լառնաքայի ծովեզերքը կառուցուած Յուշակոթողին բացումին առիթով:

29 Մայիս 2008-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան լուսաբանական հաղորդագրութեամբ մը՝ ուղղուած Կիպրահայ գաղութի անդամներուն, իր ընդվզումը յայտնեց Լառնաքայի յուշակոթողին գծով տարուած աշխատանքները:



տանքներուն անարդար հոլովոյթին առնչութեամբ, որու նախաձեռնութիւններէն բոլորովին անտեսուած էին Կիպրոսի Ազգային Առաջնորդարանը եւ Կիպրահայ գաղութը: Ան շռայլութիւն համարեց Կիպրոսի համեստ կառավարութեան տրամադրած մեծածաւալ գումարին այս ձեւով օգտագործումը եւ ընտանիքի մը կողմէ նախաձեռնութիւնը իրացնելու ձգտումը, ընդգծելով թէ Յուշակոթողին պատմական ցաւը կը պատկանի բոլորիս:

**Պետական-պաշտօնական  
մակարդակի հանդիպումներ**

Չորեքշաբթի, 2 Ապրիլ 2008-ին, Պրն. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Պետական Յեռատեսիլի ընկերութեան տնօրէն Պրն. Թեմիս Թեմիստոքլէուսին հետ, որու ընթացքին անոնք քննարկեցին Հայկական Ռատիօժամի բարելաւման կարելիութիւնները:

Չորեքշաբթի, 9 Ապրիլ 2008-ին, Պետական Ներկայացուցիչը, նորընտիր նախարարներու ծանօթացման հանդիպումներու ծիրէն ներս, տեսակցութիւն մը ունեցաւ Առեւտուրի, Ճարտարարուեստի եւ զբօսաշրջիկութեան նախարար Պրն. Անտոնիս Պասիալիտիսին հետ:



*Պրն. Ա. Պասիալիտիսին հետ*

Երեքշաբթի, 15 Ապրիլ 2008-ին, Պրն. Մահտեսեան

տեսակցութիւն մը ունեցաւ Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան Նախարար Տիկ. Սոտիրուլլա Խարալամպուսիսն հետ, ուր անոնք քըննարկեցին Կիպրոսի գաղութին հետ առնչուող կարգ մը հարցեր:

Չորեքշաբթի, 7 Մայիս 2008-ին,



*Տիկ. Ս. Խարալամպուսիսն հետ*

Պրն. Վարդգէս Մահտեսեան, ընկերակցութեամբ Նարեկ Վարժարաններու Հոգաբարձութեան ատենապետ Պրն. Գրիգոր Յարութեանի եւ Հոգաբարձական կազմի անդամ Պրն. Սեպուհ Դաւիթեանի, հանդիպում մը ունեցան Կրթական եւ Մշակոյթի Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն Տիկ. Օլիմպիա Սթիլեանուիին հետ, Նարեկ Վարժարաններու հետ առնչուող հարցերուն կապակցութեամբ:

Չորեքշաբթի, 21 Մայիս 2008-ին, Պրն. Մահտեսեան բարեկամական զրոյց-հանդիպում մը ունեցաւ Իսրայէլի Դեսպան Պրն. Ավրահամ Հատտատին հետ:

Երեքշաբթի, 20 Մայիս 2008-ին, Հայ Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Մարոնիթ եւ Լատին Ներկայացուցիչներուն, տեսակցութիւն մը ունեցաւ Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Պրն. Մարիոս Կարոյեանին հետ, Կիպրոսի Կրօնական Փոքրամասնութիւնները յուզող հարցերուն առնչութեամբ:



*Պրն. Մարիոս Կարոյեանին հետ*

Երկուշաբթի, 26 Մայիս 2008-ին, Հայ Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Թեմական Ժողովի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանին եւ Վարչական Ժողովի ատենապետ Տոքթ. Անդրանիկ Աշճեանին, տեսակցութիւն մը ունեցաւ Լառնաքայի Զաղաքապետ Պրն. Աստրեաս Մոյիսեանին հետ, քննարկելու Լառնաքայի Յուշակոթողին հետ առնչուած խնդիրներ:

Երկուշաբթի, 30 Յունիս 2008-ին, Հայ Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարար Պրն. Նեոքլիս Սիլիքիոտիսին հետ: Պրն. Մահտեսեան նախարարին ներկայացուց քաղաքացիական դիմում կատարողներու կարճ ցուցակ մը, խնդրելով անոնց շուտափոյթ լուծումը եւ կարգ մը այլ հարցեր:

Ուրբաթ, 13 Յունիս 2008-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Պաշտպանութեան Նախարար Պրն. Զոսթաս Փափաքոստասին հետ, որու ընթացքին անոնք միասնաբար քննեցին Կիպրահայ Համայնքի



*Պրն. Զոսթան Փափուքոստասին հետ*

երիտասարդներուն՝ 2008 թուականէն սկսեալ պարտադիր գիտութեան ծառայութեան մասնակցութեան գծով կարգ մը հարցեր:

### **Ձեռնարկներու ներկայութիւն**

Շաբաթ, 5 Ապրիլ 2008-ին, ՏԵՐ ԵՆ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Համագգայինի «Օշական» Մասնաճիւղի «Սիփան» պարախումբի տարեկան ելոյթին, որ տեղի ունեցաւ Ստրովոլոսի քաղաքապետարանի սրահին մէջ, բարձր հովանաւորութեամբ Կիպրոսի Նախագահ Տիմոթիոս Խրիստոֆիասի, Նախագահութեամբ Կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչին, ներկայութեամբ Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանի եւ մեծ թիւով պետական-պաշտօնական հիւրերու: Ներկայ էր նաեւ Պէյրութի Համագգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Պրն. Մկրտիչ Մկրտիչեան:

Չորեքշաբթի, 28 Մայիս 2008-ին, ՏԵՐ ԵՆ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Լառնաքայի Յուշակոթողի բացման հանդիսութեան:

Ուրբաթ, 30 Մայիս 2008-ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած ձեռնարկին՝ նուիրւած Սարդարապատի Զերոսամարտին եւ Շուշիի Ազատագրումին: Օրուան պատգամը փոխանցեց Պրն. Աւետիս Փոշոյլեան:

Կիրակի, 8 Յունիս 2008-ին, Տեր եւ Տիկին Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Զ.Յ.Դ. Կիպրոսի Կոմիտեութեան կազմակերպած Մայիս 28-ի տօնակատարութեան, որ տեղի ունեցաւ Փասիտիի սրահին մէջ եւ որու յաջորդեց ճաշկերոյթ-խրախճանք «Զլեօփաթրա» պանդոկին մէջ:

Չորեքշաբթի, 18 Յունիս 2008-ին, Զայ Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Նարեկ Զայկական Վարժարաններու ամավերջի տարեկան հանդեսին, որու ընթացքին, շրջանաւարտները, Պրն. Վարդգես Մահտեսեանի եւ Կաթողիկոսական փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի ձեռամբ, ստացան համապատասխան վկայական:

### **Հիւրասիրութիւն**

Չորեքշաբթի, 14 Մայիս 2008-ին, Լոնտոնի AYA Ֆութպոլի խումբը, որ Կիպրոս կը գտնուէր Զ.Ե.Մ.ի հրաւերով, հիւրասիրուեցաւ Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններու բնակարանը, ներկայութեամբ Զ.Ե.Մ.-Զ.Ս.Ը.Ս.ի Ֆութպոլի մարզիկներուն եւ վարչական կազմի անդամներուն:

Երեքշաբթի, 24 Յունիս 2008-ին, տեղի ունեցաւ շրջանաւարտից աւանդական տարեկան հիւրասիրութիւնը Պետական Ներկայացուցիչին բնակարանին մէջ, ներկայութեամբ մօտ 60 Զայ շրջանաւարտներու, որոնք հաճելի պահեր անցուցին երգելով եւ պարելով: Այս հիւրասիրու-

թեան ներկայ էին, ինչպէս միշտ, Կաթողիկոսական փոխանորդ Տ. Վարուժան Արք. Յերկելեանը, հոգեւոր հովիւները եւ Նարեկ Վարժարաններու ուսուցչական կազմը:

### Յանձնախումբեր

Ուրբաթ, 9 եւ 16 Մայիսին յաջորդաբար տեղի ունեցան Երեսփոխանական Գրասենեակի Երիտասարդական Յանձնախումբի նախաձեռնութեամբ կազմակերպուած «Ճամբու Ապահովութեան Նախագգուշութիւն» թեմայով ձեռնարկներ, Սուլոնա Թրիանտաֆիլիտիս սրահին մէջ:

Առաջին բաժինով խօսք առին արկածահար երիտասարդներ ու անոնց ծնողները, նկարագրելով իրենց առօրեայ կեանքի դիմագրաւած դժուարութիւնները (տեսահոլովակի ցուցադրութեամբ)՝ տալով իրենց փորձառութենէն մեկնած թելադրանքներ:



Երկրորդ բաժինով խօսք առաւ Ճամբու Ապահովութեան Խորհրդատու Պրն. Անտրեաս Փափաս, որ տեսահոլովակի մը ցուցադրութեամբ, ներկայացուց առնուելիք նախագգուշական քայլերուն օգուտը, զերծ մնալու

ճամբու մահացու արկածներն եւ անդարմանելի հետեւանքներն:

Շաբաթ, 28 Յունիս 2008-ին, մեծ յաջողութեամբ իրականացաւ Երիտասարդական Յանձնախումբի կազմակերպած Համակիարական Boat Party-ին, մասնակցութեամբ՝ Կիպրոսի երեք քաղաքներէն աւելի քան



Պրն. Ա. Փափաս

100 երիտասարդ-երիտասարդուհիներու: Կերուխումի, ինչպէս նաեւ հայկական եւ օտար երաժշտութեան պարեղանակներու ընկերակցութեամբ, անոնք անցուցին անմոռանալի եւ ուրախ պահեր մինչեւ առտուայ կանուխ ժամերը, առաջարկելով որ նմանօրինակ նախաձեռնութիւններ յաճախ կրկնուին երիտասարդութիւնը



միատեղ հաւաքելու նպատակով:

Կիպրոս-Հայաստան Յանձնախումբը Ապրիլ եւ Մայիս ամիսներուն գումարեց ժողովներու շարք մը, ուր առնուեցան կարգ մը հիմնական որոշումներ, լուծում տալու

Կիպրոս բնակչութիւն հաստատած մեր Հայաստանցի հայրենակիցներուն դիմագրաւած դժուարութիւններուն եւ զանոնք համախմբելու Հայ եկեղեցւոյ եւ դպրոցին շուրջ՝ մասնաւորաբար Փաֆոս քաղաքին մէջ:

Խորհրդատու Մարմինը, 3 Յունիսի նիստի ընթացքին, քննեց Խորհրդարանի Կրթական Յանձնախումբին ներկայացնելիք «Հայ Մշակութային Կեդրոն»ին առաջարկը, որ կենսական դեր կրնայ ունենալ Կիպրահայ գաղութի հայապահպանման աշխատանքներուն մէջ:

**Ամառուայ արձակուրդին առիթով Երեսփոխանական Գրասենեակը փակ պիտի ըլլայ Երկուշաբթի, 28 Յուլիս 2008-էն մինչեւ Կիրակի, 22 Օգոստոս 2008:**

**Նկատի ունենալով «Տարեցներու Ձեռատետր» գըրքոյկին հրատարակութիւնը եւ չծանրաբեռնելու համար մեր ընթերցողները, «Լրատու»ի այս թիւը կը պահենք ամփոփ եւ «Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն» բաժինը պիտի շարունակենք յաջորդ թիւով:**

## **ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

### **Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
Ել. Հասցէ office@armenianmp.com  
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### **Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy